ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

07 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Ջանիկ Ալավերդյանը, Արթուր Կարապետյանը, Գնել Ղազարյանը, Գրիշա Ղազարյանը, Վարդուհի Միրզոյանը, Նարինե Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր ՝ Գևորգ Սիմոնյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումներ ը՝

1. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական

դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 28 700 004 ՀՀ դրամ և ուղղել՝

ա/ կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01խմբի 01 դասի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին 20 000 000 ՀՀ դրամ,

բ/ գյուղատնտեսություն գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 4233 /աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ/ հոդվածին 200 000 ՀՀ դրամ,

գ/ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին 1 500 004 ՀՀ դրամ:

դ/ արտադպրոցական դաստիարակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին 7 000 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ եկամտատեսակում ավելացնել 34 725 558 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112/շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:

3. Արենի համայնքի սոց անապահով անձանց աջակցություն 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից պակասեցնել 1 000 000 ՀՀ դրամ և ուղղել Արենիի այլ մշակութային միջոցառումներ 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727 /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 053-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին մասի 3-րդ, 9-րդ և 12-րդ կետերը՝ Արենի համայնքի ավագանին

որոշում է.

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.10648 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0124-0015, հողատեսքը՝ արոտ) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու նպատակով:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.13176 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0110-0030, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ փոփոխվող բնակավայրերի նշանակության հողամասերին ճանապարհով ապահովելու նպատակով:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.10515 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-0222, հողատեսքը՝ արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ փոփոխվող բնակավայրերի նշանակության հողամասերին ճանապարհով ապահովելու նպատակով:

4. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.18485 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0110-0030, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ փոփոխվող բնակավայրերի նշանակության հողամասերին ճանապարհով ապահովելու նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 054-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈՐԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին

որոշում է.

Տալ համաձայնություն Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Բորիս Գասպարյանի սեփականություն հանդիսացող 0.11046 հա բնակավայրերի նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0006-0028, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ ՀՀ ՎՁՄ, Արենի համայնք, Արենի 36-րդ փողոց 2) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի գործառնական նշանակության՝ ֆոտովոլտային արևային վահանակների տեղադրման և շահագործման նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 055-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 097-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի ավագանու 12.07.2024թվականի <<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 097-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) Որոշման վերնագրի մեջ <<գյուղատնտեսական>> բառից հետո ավելացնել <<և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական>> բառերը:

2) Որոշման տեքստը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝ <<Տալ համաձայնություն Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.087 հա (ծածկագիրը՝ 10-004-0022-0015, 0,07667հա-ի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք, 0,01033հա-ի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ կառուցված ինքնակամ բնակելի տունը և օժանդակ կառույցները օրինականացնելու նպատակով>>

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 056-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԼԻՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐԵՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ և ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԹԻՎ 077-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի <<Լիսա Գրիգորյանի անվան Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել <<Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Արենի համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 6-ի թիվ 077-Լ որոշմամբ հաստատված մանկապարտեզի կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

3. Հաստատել <<Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները:

4. <<Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կատարված փոփոխության պետական գրանցման համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 059-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Արենի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 060-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԶԵՄՖԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերի և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջերով,

Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 061-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի բնակավայրերի դպրոցների տնօրենների կողմից ներկայացված ցուցակների համաձայն, Արենի համայնքի 2025 թվականի շրջանավարտներին հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ 5000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր շրջանավարտի հաշվարկով:

2. Գումարը փոխանցել ավարտական դասարանների դասղեկներին՝ երեխաներին փոխանցելու նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 062-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ավագանու 2025թվականի գարնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025թվականի հունիսի 5-ին ժամը 16:00-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 063-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.15621 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0184-0003, հողատեսքը՝ վարելահող) մրցույթով, 5 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 057-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07-Ը ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 07-ը մայիսի 2025 թվականի թիվ 5 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 07-ը մայիսի 2025 թվականի թիվ 5 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխում կատարելու մասին:

3. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Բորիս Գասպարյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 12 հուլիսի 2024 թվականի թիվ 097-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու մասին:

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, նախկին համայնքապետարանի վարչական շենքից առանձնացված հատվածը Հայաստանի Ամերիկյան Համալսարանին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

8. Արենի համայնքի <<Լիսա Գրիգորյանի անվան Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու և Արենի համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 6-ի թիվ 077-Լ որոշմամբ հաստատված կանոնադրությունը փոփոխելու մասին:

9. Արենի համայնքի 2026-2028թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու մասին:

11.Արենի համայնքի 2025 թվականի դպրոցների շրջանավարտներին գումար հատկացնելու մասին:

12. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 052-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 6-րդ փողոց 2 հասցեում գտնվող նախկին վարչական շենքի 2-րդ հարկից 34,4 քմ տարածքը՝ 3 (երեք) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Ամերիկյան Համալսարանին՝ անգլերեն լեզվի անվճար ուսուցում կազմակերպելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին լիազորել օրենքով սահմանված կարգով և ժամկետում կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 058-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գևորգ Սիմոնյանը

_____